

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

9 հունիսի, 2020 N 21

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Սահմանել, որ դիմակ կրելը պարտադիր է՝

1) փակ տարածքներում երկու և ավելի անձանց գտնվելու դեպքում՝ բացառությամբ բնակելի տարածքից և հանրային սննդի օբյեկտներից (վերջին բացառությունը վերաբերում է միայն հաճախորդներին).

2) թաղման միջոցառումների ժամանակ (ինչպես փակ, այնպես էլ բաց տարածքներում).

3) կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում:

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարումը:

3. ԱՀ պետական մարմինների ղեկավարներին, ԱՀ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ օժանդակել ԱՀ ոստիկանության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 00:01-ին:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ